

Երբ գարդարին գեղածիծաղ  
Տերեւալից ծառք անտառաց  
Էւ յամենաւստ հնչեն յուրաստ  
Պանդուխա թուշոց երգ աւետեաց,  
Ո՞հ, գու, սիրու իմ, մի հրճուիր, մի,  
ԶԵ այն գարուն Հայաստանի  
Երբ խառն ամփեայք կախուց, եզանց  
Լուսն ի գաշտն ըզբառաջիւն  
Էւ ի լերինս արօսական  
Համից քաղցրիկն հնչէ մոպիւն,  
Ո՞հ, գու, սիրու իմ, մի հրճուիր, մի,  
ԶԵ այն գարուն Հայաստանի  
Երբ այգեստանք մեր եւ պարտէզք  
Ետանրաբեռնեալք պազպէք անուշ՝  
Կաչեն զմեզ հրճուտնս յանդուն,  
Էւ մշակին փաղփողէ յոյս,  
Ո՞հ, գու, սիրու իմ, մի հրճուիր մի,  
ԶԵ այն գարուն Հայաստանի.

Ա.Ա. Երբ ի բյու սուրբ գիտութեան  
Կապաւին սգիք Հայոց համայն,  
Ի միւթիւն, յերկնային սէր  
Գրկէ, գգուէ այր իւր ընկեր,  
Վարժարանաց դնին հիմունք,  
Ծաղկին ուսմամբ անուռ մանկութք,  
Թեւ խառն ընդ թեւ եւ սիրտ ընդ սիրտ  
Երեւ, մշուկ բաղմաքիրա.  
Յօդուտ ազգի եւ Հայոբենիաց  
Գործ գարծեսցեն միշտ աննախանձ,  
ՔԷՆ չարաջնը ուսեւութեան  
Դիշին ի բոց միանդամյն,  
Էւ ի կրօն սուրբ կենոսունակ  
Լեցին յաւէա քաջ նահասակ,  
Միոյն յայնիմամ հրճուեանց, սիրու իմ  
Ա.Ա. է գարուն Հայաստանին:

ՅՈՒ.ՍԵ.Փ Վ.Ա.ՐԴ. ՓԻՆՈ.ԶԵԼԿՆՅ.

## ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱԿ Ի ՄԵՌԵԼՈՅ

Հաւատացեալք Քրիստոսի, մեր մարգաւէր Փրկիչը մարգիան վրկու-  
թեան մեծ գործը փառաւոր յաղթանակաւ ի զլուխ տարաւ, յաղթեց  
աշխարհի իշխանին, առ ոտն կօխից մեղքերի ամեն տեսակները, հար-  
թեց մեր յառաջ առաքինութեան, բարեգործութեան և զէպի Աբրա-  
յումիւն առաջնորդող նեղ և անձուկ ձանապարհը, խորտակեց մարդ-  
կութեան վերայ բռնացող յաւիտենական մահուան եղջերները և  
աստուածային փառօք յարեաւ ի մեռելոց, եւր յարութիւնը մեզ հա-  
ւատացեալներիս նոյնօրինակ յարութեան անսուտ առհաւատչեայ պար-  
գևելով, նորա ամբողջ երկրաւոր կեանքը մի երկունք, պատրաստու-  
թիւն էր մեր տմենիս փրկութեան. մեր կեանքը ևս թող երկունք ու  
պատրաստութիւն լինի մեր սեպհական փրկութեան. Յիսուսի յարու-  
թիւնը աւետաղ երկնային հրեշտակի ձայնը թող յարուցանէ և մեզ մեր  
բարոյական մեռելութիւնից լցնէ մեր սրտերը Յիսուսի և ընկերի սի-  
րով. զինէ մեր հոգին մեր յարութեան և երանական վայելման յու-  
սովն ու հաւատովը. որով կարող լինինք քրիստոնեավպայիւլ առաքի-  
նութիւններով և բարեգործութիւններով յաղթանակել աշխարհի և  
նորա ամեն Հոգեկորոյս մեղքերի և հրապուրանքների վերայ. և մեր  
հոգերուն գոհութեան և փառարանութեան և աղօթից անուշահոս-  
իւղով և խնկով պատրաստունք տօնելու Փրկչի Աստուածային յա-  
րութիւնը, յաւիտենական կենաց մէջ նորան փառակից լինելու կեն-  
գանի յուսովն ու հաւատովը.

Նորին Բարձր Սրբազնութիւն Ա. Էջմիածնի Կաթուղիկոսական ՏԵՂԱԿԱԼ Գերապատիւ Մակար Արքեպիսկոպոսը Մարտի 27 ին առաջին անգամ՝ պաշտօնապէս այցելեց Մայր Աթոռությու Գէորգեան Ճեմարանին Ա. Սինօղի Սրբազան Անդամոց և մի քանի Վարդապետաց հետ միասին։ Ճեմարանի Մեծ. Տեսուչն ու Յարդյոյ ուսուցչաց խումբը Նորին Բարձր Սրբազնութեանը գիմաւորեցին Ճեմարանի հարաւային դրան գաւթում։ Նորին Բարձր Սրբազնութիւնը երբ մտաւ Հանդիսարանը, ուր ժողովուած էին Ճեմարանի բոլոր սանունքը, մի քանի Երեսն յատուկ ազգու խօսքերով ողջունեց նոցա և յայտնեց ամենին Եւր սրտի ուրախութիւնը նոցա քաջառողջ և բարեհամբաւ գտնելու համար։ Սրբազան Հօր ողջունին անմիջապէս հետեւց ուսանողաց և աշակերտաց քաջցր ու ներդաշնակ երգեցողութիւնը։ Երգեցողութիւնից յետոյ Բ. Լսարանի ուսանող Ա. Զամինեանցը ուղղեց դեպի Նորին Բարձր Սրբազնութիւնը մի սրտառուչ Ճառ, որոյ միջոցաւ Ճեմարանի բոլոր սանունց կողմից շնորհաւորելով Նորին Բարձր Սրբազնութեան գալուստն ու այցելութիւնը, հուսկ ուրեմն յայտնեց իւրեանց ամենից սրտի խորին ցաւն ու կոկիծը, որոնք պատճառել էր Ճեմարանի հանգուցեալ Վեհափառ Հիմնադրի մահը, նոյնպէս յայտնեց ամենի կողմից հաստատուն յոյս՝ գտնելու Նորին Բարձր Սրբազնութեան մէջ նոյն խնամքը, միսիթարութիւնն ու ակնկալիքը, որո՞ք վայելում և սպասումէին իւրեանց հանգուցեալ Վեհափառ Հօրից։ Ճառից յետոյ Նորին Սրբազնութիւնը շեշտելով և ոգեորուած ձայնով արտասանեց հետեւեալ նշանաւոր խօսքերը։ «Ցաւումեմ հոգւով, որ ես գալով Ա. Էջմիածին՝ այս Ճեմարանի Հիմնադրի — ամենայն հայոց Գէորգ Դ. Կաթուղիկոսին չգտայ Եւր Հայրապետական Գահի վերայ, ես և իմ Սրբազան Եղբարը — Ա. Սինօղի Անդամները ուխտած եմք ամենայն ջանք և աշխատութիւն ի գործ գնել և այս Ճեմարանը՝ իւր Հանգուցեալ Վեհափառ Հիմնադրի ցանկութեան համաձայն՝ պահպանել բարոյական և նիւթական ապահով դրութեան մէջ և այնպէս յանձնել Նորան յաջորդող նորընտիր Հայրապետին։ Դուք էք Հայոց Ազգի և Նորա Հոգեռականութեան միակ յոյսը, ջանացէք ամենայն կերպով պսակել և արդիւնաւորել նոցա ձեր վերայ ունեցած յոյսն ու ակնկալութիւնը։ Դուք էք ժողովրդեան լոյսը, աշխատեցէք պյտ լոյսը վառ և բորբոք պահել ըստ ժամանակին նոցա սրտից մէջ։» Նորին Բարձր Սըրբազնութեան այս նշանաւոր խօսքերի մէջ արտափայլող սրտի անկեղծութիւնն ու ջերմ ոգեորութիւնը մեծ ազդեցութիւն ունեցան բոլոր հանդիսականաց վերայ։ Ապա Գեր. Սրբազան Հայրը այցելեց Ճեմարանի մատենադարանին և ֆիզիքական գործիքների թանգարանին։ Նոյնպէս և բոլոր ուսանողաց և աշակերտաց՝ առանձին առանձին, իւրաքանչիւրոց իւրեանց լսարաններում և դառարաններում, իրախուսեց և քաջալերեց նոցա. ի մօտոյ ծանօթացաւ իւրաքանչիւր դասարանում

աւանդելիք առարկաներին և ցանկութիւն յայտնեց յարմար ժամանակներում ներկայ լինել նոցա Հոգերանութեան և Հայկաբանութեան դասերին։ Եւ ապա քաջալերելով Մէծ, Տեսչին և Ռւսուցիչներին՝ դարձաւ իւր սենեակը։

Երդարե նորին Բարձր Սրբազնութեան բռնած խոհական ընթացքը Մարտ Աթոռոյս Ճեմարանի վերաբերութեամբ և նորա վերայ ունեցած սէրն ու խնամքը կատարելապէս երաշխաւորումն իրագործել Էւր արտասանած այն նշանաւոր խօսքերը, որոնք վերաբերումնն Ճեմարանի բարոյական և նիւթական աւելի ապահով գրութեան վերածելուն ի միսիթարութիւն Ազգիս և ի պայծառութիւն Հայաստանեայց Ս. Եկեղեցոյ։

\* \* \*

Ամսոյս Զին Մայր Աթոռոյս Գէորգեան Ճեմարանի ուսանողներն ու աշակերտները ի պատիւ յիշատակի Ս. Գրիգոր Լուսաւորչի Հայաստանեայց Եկեղեցւոյ գրականական հանդէս կատարեցին, որին ներկայ էին նորին Բարձր Սրբազնութիւն Գեր. Մակար Արքեպիսկոպոսը և Ս. Սինօդի Սրբազն Անդամներից և Վարդապետներից ոմանք Հանդէսը սկսուեցու ուսանողաց և աշակերտաց ներդաշնակ երգեցողութեամբ Երգեցողութիւնից յետոյ Գ. լսարանի ուսանող Ս. Կանայեանցը ամբիոն բարձրացաւ և բերանացի ատենաբանելով՝ նկարագրեց Ս. Գրիգոր Լուսաւորչի կեանքը, չարչարանքը և Հայ ազգի վերայ ունեցած անշափ բարոյական երախտիքը, Հանդիսականները ատենախոսութեանը պատասխանեցին երկար ծափահարութեամբ։ Նորին բարձր Սրբազնութիւն Գեր Մակար Արքեպիսկոպոսը ատենախոսութեան մի քանի կետերի մասին յայտնեց համառօտ խօսքերով իւր նկատողութիւնները, որոնք ընդունելութիւն գտան հանդիսականների կողմից։ Սուրան հետեւց քաղցր երգեցողութիւն, որից յետոյ Ա. լսարանի ուսանող Ս. Աւետիքեանցը կարգաց մի երկար ու գեղեցիկ ճառ, որի մէջ բաւական Ճիշտ պատկերներով աստիճանաբար նկարագրեց Հայոց հեթանոսական կրօնի զանազան շրջաններն ու գրութիւնները և վերջացրեց Քրիստոնէական կրօնի առաջին շրջանով։ Ապա նորին Բարձր Սրբազնութիւն Մակար Արքեպիսկոպոսը «պահպանիչ» ովք կնքեց Հանդէսը և հանդիսականները ցրուեցան։

Ցանկալի էր, որ մեր Թեմական ուսումնարաններում ևս յաճախակի կրկնուէին այսպիսի գրականական հանդէսներ ըստ ներելոյ հանգամանց։

Ս. Սինօդի առաջարկութեան և բարձրագոյն բարեհաճութեան համաձայն ամենայն Հայոց նոր Կաթողիկոսի ընտրութեան օր որոշուեցաւ 1884 թուականի Մայիսի 6. լ.

Ս. Սինօդի կարգադրութեամբ ներկայ 1883 թուականի համար Ս. Էջմիածնի Տպարանական ժողովի անդամ նշանակուեցան բարեշնորհ Սահակ վարդապետ Բաղդասարեանց, և չնորհունակ Սահակ և Եփրեմ Սարկաւագունք:

Ս. Սինօդի հրամանաւ Մողնւոյ Ս. Գէորգայ վանուց վանահայր բարեշնորհ Մկրտիչ վարդապետ Շահնշաղարեանցը նշանակեցաւ վանահայր Ս. Ծողակաթի վանուց և ի տեղի նորա կարգեցաւ նոյն վանուց վանահայր բարեշնորհ Եղիշէ վարդապետ Ամատունին, որին յանձնուեցաւ և Ապարանի գաւառի և Արարատի Հ-ը-ի-լ-ուն պաշտօնները:

Ներկայ տարւոյս մարտի 26ին Մայր Աթոռում վախճանուեցաւ Հին—Նախիջևանի բնակիչ մահտեսի Մկրտիչ Թունեանցը, որը կտակեց յօդուտ Մայր Աթոռոյս Ճեմարանի միանուագ էրէ+ հ-ը-ի-լ (300), յանուն ս. Գէորգայ Եկեղեցւոյ Հին Նախիջևանի, շրջ հ-ը-ի ը-ը-ի (4000), այն պայմանաւ, որ այդ գումարը մինչև յիսուն տարի մնայ տոկոսով արքունի բանկերից մինում. յիսուն տարւոց յետոյ գոյացեալ գումարի տոկոսը տարեց տարի գործադրուի տեղուոյն Հայոց հեղեղոր—ծխական գպրոցի վերայ, կառուցանել իւր սեպհական գումարով յիշեալ եկեղեցւոյ արեելեան կողմում չորս խանութ և նոցա արդիւնքը յատկացնել յօդուտ նոյն գպրոցի: Շարունակ տասն տարի ի նպաստ յիշեալ գպրոցի իւր սեպհականութեանց արդիւնքից տալ տարեկան հ-ը-ի-լ ը-ը-ի (100), նոյն եկեղեցւոյ խաչկալը շինելոյ համար յատկացնել շրջ հ-ը-ի-լ ը-ը-ի (400), ամենայն տարի Հրեշտակապետաց տօնի օրը պատարագ մատուցանել և կերակրել աղքատներին, և լրացնել տալ յիշեալ Ս. Գէորգ եկեղեցւոյ զանգակատան թերի մնացած շինութիւնը:

Հանգուցեալը իւր կենգանութեան ժամանակ իւր սեպհական ծախքով կառուցել է Հին Նախիջևանի Յաջորդարանի շինութիւնը և նուիրել է Ս. Էջմիածնին: Իւր սեպհական ծախքով կառուցել է տեղւոյ տղայոց գպրոցը, նոյնպէս յիշեալ քաղաքի ս. Գէորգ եկեղեցւոյ շինութեան ծախուց զրեմէ կէս մասը հոգացել է իւր սեպհականութիւնից:

Հանգուցելոյ մարմինը Մարտի 24ին արժանավայել հանգիսով թաղուցցաւ ս. Գոյեանեայ վանուց սրահի մէջ:

Յիշատակն արդարոց օր հնութեամբ եղիցի:

„Русский Курьеръ“ լրագրում կարգումենք, որ Առուսաց բարձրագոյն Ս. Սինօդը իւր ժողովրդեան բարոյական և Հոգեկան զրութիւնը բարւոքելու համար ձեռք է առել զօրաւոր միջոցներ, — բոլոր նահանգների ժողովրդեան վիճակը Հետազոտելու համար իւր Անդամներից (сенаторъ) քննիչ ուղարկել, մեծ քանակութեամբ կրտնական զրքեր տարածել,

քահանալից առանձին ուշադրութիւնը դարձնել իւրեանց հօտի բարոյական հոգածարութեան վերայ, եկեղեցիներում քարոզատուութեանց ծրագիրն ընդարձակել, և որ աւելի գլխաւորն է, հոկել լուտերական հոգեորականութեան վերայ և արգելուլ նոցա իւրեանց եկեղեցական քարոզութեանց մէջ քաղաքական հարցեր շոշափել, որը շատ անգամ թոյլ են տալիս իրանց անելու նոցա քարոզիչները (pastorъ).

Թող գեռ եւս մեր ազգայիններից ոմանք պարզամիտք հաւատան եւ պնդեն թէ՝ լուտերական քարոզիչների նպատակն է հոգուոյ փրկութիւն եւ բարոյական լուսաւորութիւն տարածել հայերի մէջ եւ ոչ քաղաքականութեան համար մարդորսութեան պաշտօններ կատարել:

### ԱՅԼ ԵՒ ԱՅԼ Ք.

«Новое Время» Խուս օրաթերթը զրումէ որ անուանի ծովագնաց Դոբրոդվորսկին հնարել է օգաչու նաւ, որին կարողանումէ ըստ կամի ուղղութիւն և ընթացք տալ ամենայն շաջողութեամբ։ Այս օգաչու նաւով նա մտադիր է ճանապարհորդութիւն անել հիւսիսային գօտուոյ վերայ։

Տերեքի նահանգի նոգկառ գիւղում ներկայ ամի անցեալ Փետրվարի 26ին վախճանուել է Օսեղին Ասագէ Սոկայեվ անունով մի մարդ 150 տարեկան հասակում։ Այս ծերունին մինչև իւր մահուան նախընթաց շաբաթը պարապելիս է եղել իւր տնտեսական գործերով ամենայն ժրութեամբ։

«Московская ведомость» Խուս օրագրի մէջ կարդում ենք, որ Լազարեան ճեմարանի վերատեսուչ պ. Քանանեանցը իւր քննութեանն ու հետազոտութեանն է ենթարկել ճեմարանի մատենադարանում գտնուած մի հատ աղիւս, որը կրումէ իւր վերայ նարուգողոնոսորի մակագրութիւնը։ Այդ աղիւսը ունի երիսւ և իւր վերշոկ երկայնութիւն և երեւ վերշոկ լայնութիւն, և նորա վերայ կայ եօթն տող մակագրութիւն բարելոնեան մակագրութեանց մէջ գործածուած հին նշանագրերով զրուած, որի բովանդակութիւնն է «Նարուկուդուր—ուսուր թագաւոր Բարելոնի, տիրող բ—սօզ—ի (անուն Բարելոնի բազմայարկ և սրածայր աշտարակի) և բ—զի—да (անուն տաճարի, բառացի նշանակութեամբ՝ յաւիտենական տուն) արքոյորդի նարու—պօլ—ուսարա (նարուպալասարայ) արքայի Բարելոնի»։

Ա-Դ-Հ-Է-Լ-Ո-Ր-Ե-Լ սակնաջուրը մրգատու ծառերի, մարգերի և խաղողի որթերի (կուդրակ) պարարտացնող ամենալաւ միջոցն է։